Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-948-17.02.2016-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀՐԱԶԴԱՆ-ՑԵՄԵՆՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՏՈՒՅԺԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հրազդան-ցեմենտ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2016 թվականի փետրվարի 1-ի դրությամբ հաշվարկված, բայց չվճարված հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության գծով առաջացած տույժերից՝ 504923.4 հազար դրամ ընդհանուր գումարի չափով (այդ թվում՝ 303800.6 հազար դրամ՝ ավելացված արժեքի հարկի գծով, 35645.8 հազար դրամ՝ եկամտահարկի գծով, 41427.5 հազար դրամ՝ եկամտային հարկի գծով, 36071.6 հազար դրամ՝ շահութահարկի գծով, 87977.9 հազար դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով):

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ամփոփաթերթ

«ՀՐԱԶԴԱՆ-ՑԵՄԵՆՏ» փակ բաժնետիրական ընկերությանը հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով առաջացած տույժերից ազատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ Ազգային Ժողովում առաջին ընթերցման ժամանակ կատարված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը: Գրության ամսաթիվը, գրության համարը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունը**
1.ՀՀ Ազգային Ժողովի Պատգամավորներ՝ Արաիկ Հավիաննիսյան, Արամ Մանուկյան(առաջարկությունը ներկայացվել է բանավոր՝ նախագծի առաջին ընթերցմամբ քննարկման ժամանակ)	1. Առաջարկվել է նախագծի վերնագրում «արտոնություններ տալու» բառերը փոխարինել «առաջացած տույժերից ազատելու» բառերով:	1.Ընդունվել է:	1.Կատարվել է համապատասխան փոփոխություն:
2.ՀՀ Ազգային Ժողովի Պատգամավոր՝ Վարդան Այվազյան(առաջարկությունը ներկայացվել է բանավոր՝ նախագծի առաջին ընթերցմամբ քննարկման ժամանակ)	2. Առաջարկվել է նախագծից հանել «5201.6 հազար դրամ՝ բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով» բառերը:	2.Ընդունվել է:	2.Նախագծից հանվել է «5201.6 հազար դրամ՝ բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով» բառերը և տույժերից ազատման ենթակաը անդհանուր գումարը նվազեցվել է 5201.6 հազար դրամով: